ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԱՅԻՆ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԳՐՔԵՐ՝ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ, ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ

Աշխատում ենք միասին՝ բարելավելու բարձրագույն կրթության որակը

http://partnership-governance-eu.coe.int

Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում
բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար ծրագիր

Partnership for Good Governance

Գործընկերություն հանուն լավ կառավարման

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԱՅԻՆ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԳՐՔԵՐ՝ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ, ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ

ԱՌԱՋԱՐԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

Սույն փաստաթուղթը պատրաստել է միջազգային փորձագետ Դենիս Վարրինգտոնը (ՀԱԵՎ համալսարանի խորհրդի նախագահ)՝ երկու ազգային փորձագետներ՝ Արևիկ Անափիոսյանի (Երևանի պետական համալսարան) և Նարինե Ալեքսանյանի (Հայաստանում ֆրանսիական համալսարան) աջակցությամբ։

2016

Սույն փաստաթուղթը կազմվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի միջև համատեղ ծրագրի ֆինանսական միջոցներով: Այստեղ արտահայտված տեսակետները որևէ կերպ չեն արտացոլում Եվրոպական միության կամ Եվրոպայի խորհրդի պաշտոնական տեսակետը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ ԷԹԻԿԱՅԻ ՏԻՊԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ 8

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ ԷԹԻԿԱՅԻ ՏԻՊԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ 13

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԹԻԿԱՅԻ ՏԻՊԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ 17

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՄՇԱԿԵԼՈՒ ՈՒՂԵՑՈՒՅՑ 21

ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԳՐՔՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ ...25

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Սույն փաստաթուղթը նպատակ ունի ապահովելու Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում էթիկայի կանոնագրքերի ընդունման հիմքերը:

2. Ելնելով պետությանը որակյալ կրթություն տրամադրելու պարտավորությունից՝ Եվրախորհրդի և Եվրամիության համատեղ օժանդակությամբ մշակվել են էթիկայի կանոնագրքերի մի շարք օրինակելի ձևեր բարձրագույն ուսումնական հաստատությունների ներբուհական դերակատարների երեք խմբերի՝ վարչական աշխատակազմի, ակադեմիական աշխատակազմի և ուսանողների համար:

3. Էթիկայի կանոնագրքերը վերոնշյալ դերակատարների համար մշակվել են էթիկական վարվեցողության այն սկզբունքների հիման վրա, որոնք ներկայացված և նկարագրված են Եվրոպայի խորհրդի միջազգային փորձագետների կողմից մշակված շրջանակային փաստաթղթում, որում հղում է կատարվում Եվրոպայի խորհրդի «Կրթության ոլորտում էթիկայի, թափանցիկության և բարեվարքության համաեվրոպական հարթակի» (ԷԹԻՆԵԴ) կողմից մշակված փաստաթղթերին[1]:

4. Առանձին կարգավորման առարկա է այն հարցը, թե Կրթության և գիտության նախարարությունը բարձրագույն ուսումնական հաստատությունների կառավարման մարմիններից ինչ եղանակով է պահանջելու ընդունել նոր կանոնակարգեր, կամ փոփոխել գործող կանոնակարգերը՝ համապատասխանեցնելով դրանք օրինակելի ձևերին: Այս դրույթն ընդգրկվելու է «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի նախագծում՝ որպես պարտադիր կատարման նոր բարձրագույն ուսումնական հաստատությունների համար: Հաստատություններից կպահանջվի ոչ միայն պաշտոնապես ընդունել, այլև կիրառել կանոնակարգերը, մշտադիտարկել դրանց իրականացումը և ներկայացնել հրապարակային հաշվետվություն դրանց կիրառման և մշտադիտարկման վերաբերյալ՝ որպես իրենց հաշվետվությունների բնականոն գործընթացի մաս: Հաստատությունների ինքնավարությունն առավելագույնս պահպանելու համար նախարարությունից ակնկալվում է ընդունել տիպային օրինակները, իսկ հաստատություններին իրավունք է վերարահվում ինքնուրույն որոշելու կանոնակարգերի մանրամասները՝ համաձայն իրենց ներքին ընթացակարգերի:

[1] http://www.coe.int/t/DG4/EDUCATION/etined_en.asp.

Հիմնական տեղեկություններ

5. Առաջարկները կազմվել են Եվրոպայի խորհրդի/ԵՄ ֆինանսավորմամբ «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար»[2] ծրագրի շրջանակում, ինչի միջոցով օժանդակություն է տրամադրվում Հայաստանի կառավարության՝ 2015-2018 թթ. հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի արդյունավետ իրականացմանը: Ծրագրի նպատակն է՝ աջակցել գործող մասնագետներին՝ կանխարգելման և բարեվարքության մեխանիզմների մշակման գործում և բարելավել բարեխիղճ կառավարումը Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտում:
6. Սույն առաջարկները հիմնված են 2014 թվականից ի վեր մշակված ԷԹԻՆԵԴ-ի երկու՝ «Կրթության ոլորտում էթիկայի սկզբունքները» (որն առավելապես հենվում է համոզմունքների ու արժեքների վրա) և «Կրթության ոլորտում բոլոր դերակատարների էթիկական վարքագիծը» (որտեղ ներկայացված են մասնագիտական պրակտիկայի էթիկայի կանոններն ու սկզբունքները) վերտառությամբ փաստաթղթերի վրա: Կիրառման ընթացքում այս երկու փաստաթղթերը պետք է դիտարկվեն որպես մեկ ամբողջություն: Առկա են նաև մի շարք այլ համապատասխան նյութեր, այդ թվում՝ ՀՄԱ և Մագնա Կարտա դիտարանի բարձրագույն կրթության ոլորտում էթիկայի կանոնագրքի ուղենիշները (2012 թ.): Բոլոր կողմերն ընդունում են, որ անհրաժեշտ է առաջ շարժվել հակակոռուպցիոն կարգավորման «մեխանիկական» միջոցառումներից. ամբողջ հասարակությունը կարիք ունի հավատարիմ մնալու էթիկայի դրական սկզբունքներին, և սա պետք է արտացոլվի մշակված կանոնագրքերում:
7. Սույն առաջարկները հիմնվում են հատուկ Հայաստանի համար մշակված երկու շրջանակային փաստաթղթերի վրա՝ «Բարձրագույն ուսումնական հաստատություններում դերակատարների էթիկայի կանոններ» և «Շրջանակային փաստաթղթերի համար էթիկայի կանոնագրքեր կազմելու մասին ուղեցույց», որոնք ներկայացված են ստորև.

• Բարեվարքություն

Կրթական ոլորտի դերակատարների վարքագիծը համահունչ է մի շարք դրական բարոյական և էթիկական սկզբունքներին ու չափանիշներին, որոնք հենվում են հիմնական արժեքների վրա:

• Ազնվություն

Բուհի բոլոր դերակատարները պետք է մշտապես խուսափեն ցանկացած խարդախությունից, ստախոսությունից, խաբեությունից, գողությունից, շորթումից կամ որևէ այլ անազնիվ արարքից:

---

[2]Մեկնարկը՝ 2015 թվականի հունվար, տևողությունը՝ 24 ամիս, բյուջեն՝ €400,000, դոնոր՝ Եվրոպայի խորհուրդ և Եվրոպական միություն, գործընկերներ՝ Կրթության նախարարություն, պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ:
http://www.coe.int/en/web/yerevan/strengthening-integrity-and-combatting-corruption-in-higher-education-in-armenia

• **Ճշմարտություն**
Բուհերի բոլոր դերակատարները պետք է «Ճշմարտությունն» ասեն և չստեն բարձրագույն կրթության համակարգի ներսում իրականացվող ցանկացած տիպի հաղորդակցության ժամանակ:

• **Թափանցիկություն**
Այս սկզբունքը պահանջում է ազատորեն հանրայնացնել ոչ միայն բուհի՝ որպես կազմակերպության, այլև բուհի բոլոր դերակատարների՝ որպես անհատների մասին տեղեկատվությունը, և այս պարտականության շրջանակը տարբեր է՝ պայմանավորված այն հանգամանքով, թե ինչ դերակատարի մասին է խոսք գնում:

• **Հարգանք այլոց հանդեպ**
Բուհերի բոլոր դերակատարները պետք է ցուցաբերեն բարձրագույն կրթության համակարգում ներգրավված բոլոր շահառուների և շահագրգիռ կողմերի արժանապատվության, ինչպես նաև ֆիզիկական ու հոգեկան անձեռնմխելիության նկատմամբ հարգանք, ճանաչեն բուհերի դերակատարների՝ իրենց մասնավոր կյանքը պաշտպանելու և ֆիզիկական ու հոգեբանական բռնությունից պաշտպանված լինելու ընդհանուր իրավունքները:

• **Վստահություն**
Բուհերի բոլոր դերակատարները կարող են միանգամայն վստահ լինել միմյանց նկատմամբ ազնվության, ճշմարտացիության և բարեվարքության դրսևորման հարցում:

• **Հաշվետվողականություն**
Բուհերի բոլոր դերակատարները պատասխանատու են իրենց լիազորությունները պատշաճ կատարելու համար:

• **Արդարացիություն**
Բուհերի բոլոր դերակատարները միմյանց նկատմամբ պետք է վարվեն անկողմնակալ, առանց խտրականության և անազնիվ դրսևորումների:

• **Հավասարություն, արդարություն և սոցիալական արդարություն**
Բուհերի բոլոր դերակատարները պետք է պահպանեն կայունության, հավասարության և արդարության՝ կրթական և սոցիալական արժեքները, ինչպես նաև ճանաչեն ապագա և ներկա սերունդների իրավունքներն ու պարտականությունները: Պետք է գործնականում կիրառեն արդար, թափանցիկ, ներառական և կայուն քաղաքականություն և գործելակերպ՝ կապված տարիքի, հաշմանդամության, գենդերի և գենդերային ինքնության, ռասայի, էթնիկ պատկանելիության, կրոնի և դավանանքի ու սեռական կողմնորոշման հետ, պետք է ապահովեն բարձրագույն կրթության հասանելիությունը՝ ակադեմիական որակավորում ունեցող հնարավորինս մեծ քանակի անձանց համար:

• Կրթական համակարգի և կրթական հաստատությունների ժողովրդավարական ու էթիկական ղեկավարում և կառավարում

Բուհերի բոլոր դերակատարները պետք է ընդունեն, որ բուհերի ղեկավարումը և կառավարումը պետք է հիմնվեն բոլոր համապատասխան դերակատարների ժողովրդավարական ներգրավվածության վրա, և ղեկավարվեն էթիկայի հիմունքներով առաջնորդություն իրականացնող առաջնորդների կողմից:

• Որակյալ կրթություն

Բուհերի բոլոր դերակատարները պետք է ընդունեն իրենց անվերապահ հանձնառությունը՝ հնարավորինս բարձր որակի կրթություն տրամադրելու հարցում:

• Անձի կատարելագործում և համակարգերի բարելավում

Բուհերի բոլոր դերակատարները պետք է ընդունեն բարձրագույն կրթության համակարգի շարունակական բարելավման գործում առավելագույն ներդրում կատարելու կարևորությունը:

• Ինստիտուցիոնալ ինքնավարություն/ինստիտուցիոնալ անկախություն

Այս սկզբունքի մաս է կազմում ազգային կրթական համակարգում առանձին հաստատություններին համապատասխան ինքնավարություն և անկախություն շնորհելու և այն պահպանելու անհրաժեշտության ճանաչումը, ինչը կբացառի կրթության նկատմամբ չափազանց կենտրոնացված քաղաքական հսկողությունը:

• Միջազգային համագործակցություն

Բուհերի բոլոր դերակատարները ճանաչում են կրթական գործունեության մեջ դրական միջազգային համագործակցության կարևորությունը:

Այս սկզբունքներին կարելի է ավելացնել այլ միջազգային աղբյուրներից բխող սկզբունքներ, որոնք վերագրելի են բարձրագույն կրթությանը: Դրանք են՝

Նվիրվածություն• Օբյեկտիվություն • Հրապարակայնություն • Առաջնորդություն • Ակադեմիական ազատություն

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ ԷԹԻԿԱՅԻ ՏԻՊԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Ներածություն

1. Սույն փաստաթուղթը նպատակ ունի ապահովելու բարձրագույն ուսումնական հաստատությունների վարչական աշխատակազմի[3] համար էթիկայի տիպային կանոնագրքի ընդունման հիմքերը: Սույն տիպային կանոնագրքի առաջարկները պետք է արտացոլվեն համապատասխան հաստատության ներքին կանոնադրություններում, կանոններում և ընթացակարգերում:

Սկզբունքները

2. «ՀՀ օրենսդրության համաձայն նշանակված կամ ընտրված վարչական աշխատակազմի անդամների վարքագիծը պետք է համապատասխանի էթիկական վարվեցողության ընդհանուր սկզբունքներին: Այդ սկզբունքները պետք է կիրառելի լինեն բարձրագույն ուսումնական հաստատությունների վարչական աշխատակազմի անդամների նկատմամբ՝
    1) հաստատության կառավարման և ղեկավար բաժինների,
    2) ակադեմիական և օժանդակ աշխատակազմի,
    3) ուսանողների,
    4) պայմանագրային կամ որևէ այլ հարաբերության մեջ գտնվող կամ հաստատության գործունեության հետ կապված հետաքրքրություն ունեցող ցանկացած անձանց կամ խմբերի հետ հարաբերություններում:

Կառավարման մարմիններ

3. Էթիկական վարվեցողության ընդհանուր սկզբունքների համաձայն բարձրագույն ուսումնական յուրաքանչյուր հաստատություն պետք է ընդունի և հրապարակի էթիկայի կանոնագիրք վարչական աշխատակազմի համար, որն առնվազն պետք է ներառի այս սկզբունքները և գործող օրենսդրության համաձայն նախատեսի սանկցիաներ՝ դրանք չպահպանելու համար:

Բարձրագույն ուսումնական հաստատության վարչական աշխատակազմի ընդհանուր իրավունքները և պարտականությունները

4. Վարչական աշխատակազմի իրավունքներն ու գործառույթները սահմանված են «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ՀՀ Աշխատանքային օրենսգրքով, ուսումնական հաստատության կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

    Այն դեպքերում, երբ շահերի բախման իրավիճակների հետ կապված հարաբերությունները նախատեսված և կարգավորված չեն օրենսդրությամբ, ապա

[3] Բարձրագույն ուսումնական հաստատությունների հաստիքացուցակով հաստատված վարչական պաշտոններ (ռեկտոր, պրորեկտոր, դեկան, աշխատակազմի ղեկավար, հաշվապահ, իրավաբան, և այլն)

հաստատությունը պետք է մշակի մանրամասն ներքին քաղաքականություններ և կանոնակարգեր՝ շահերի ցանկացած բախումից խուսափելու համար:

1) Հաստատության կառավարման մարմինների անդամներն իրավունք ունեն համապատասխան մարմնին գաղտնի տեղեկացնել գործող օրենսդրության կամ էթիկայի սկզբունքների ցանկացած ենթադրյալ խախտման մասին՝ առանց մտավախության, որ իրենց համար անբարենպաստ հետևանքներ կարող են առաջանալ:

5. Բարձրագույն ուսումնական հաստատության վարչական աշխատակազմի անդամները պարտավոր են՝
   1) վեր դասել հաստատության շահերն իրենց սեփական շահերից և չձգտել շահույթ ստանալ պաշտոնական դիրքի օգտագործմամբ կամ չարաշահելով այն,
   2) չընդունել որոշակի եղանակով գործելու կամ չգործելու որևէ հանձնագիր իրենց նշանակած կազմակերպությունից կամ մարմնից, կամ չընդունել որևէ հրահանգ ցանկացած անձից, քաղաքական կուսակցությունից, արհմիությունից, կրոնական կամ որևէ այլ արտաքին աղբյուրից,
   3) օրակարգի՝ քննարկման ենթակա հարցերում (ներառյալ՝ կադրերի բաժինների կողմից աշխատակիցների նշանակման և առաջխաղացման), ֆինանսական, պայմանագրային և այլ համապատասխան հարցերը), իրենց կամ իրենց ընտանիքի անմիջական անդամի որևէ անձնական շահի առկայության դեպքում հայտնել այդ մասին նախքան քննարկման սկիզբը, և պաշտոնապես հրաժարվել այդ հարցերի քննարկմանը մասնակցելուց,
   4) չպահանջել, կամ չընդունել որևէ կաշառք կամ որևէ այլ ֆինանսական միջոց, կամ չփորձել ստանալ կամ ընդունել որևէ այլ անձնական օգուտ, որը կարող է ազդեցություն գործել իրենց վրա որոշումներ կայացնելիս,
   5) անմիջապես հայտնել կաշառելու կամ անձնական օգուտ առաջարկելու ցանկացած փորձի մասին համապատասխան մարմիններին,
   6) հաստատության կառավարման և ղեկավարման հետ կապված կանոններ ընդունելու և կիրառելու իրենց կոլեկտիվ իրավասությունը կամ անձնական պատվիրակված իրավասությունն իրականացնելիս ապահովել, որ այդ կանոնները համապատասխանեն գործող օրենսդրությանը և Կանոնագրքում սահմանված էթիկայի սկզբունքներին,
   7) իրականացնել ներքին աուդիտի կամ ռիսկերի կառավարման այնպիսի գործընթացներ, որոնք հնարավորություն կտան անդամներին համոզվել, որ հաստատության ֆինանսական և մյուս գործերն իրականացվում են արդար, թափանցիկ, գործուն և արդյունավետ եղանակով:

Ղեկավարներ

6. Էթիկական վարվեցողության ընդհանուր սկզբունքների համաձայն՝ բարձրագույն ուսումնական յուրաքանչյուր հաստատություն պետք է նաև ընդունի և հրապարակի էթիկայի կանոնագիրք ղեկավարների համար, այդ թվում՝ ռեկտորի, պրոռեկտորների, ֆակուլտետների դեկանների, բաժինների պետերի և համապատասխան ու նմանատիպ պաշտոններ զբաղեցնող անձանց, ինչպես նաև վարչական աշխատակազմի համար, որոնք ունեն ղեկավարման իրավասություն: Կանոնագիրքը պետք է առնվազն ներառի այս սկզբունքները և նախատեսի սանկցիաներ՝ դրանք չպահպանելու համար, գործող օրենսդրության համաձայն:

Բարձրագույն ուսումնական հաստատության ղեկավարների ընդհանուր իրավունքները և պարտականությունները

7. Հաստատության գործադիր մարմնի՝ ռեկտորի, իրավունքները, գործառույթները և պարտականությունները սահմանվում են ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով: Հակառակ դեպքում՝ հաստատությունը պետք է մշակի մանրամասն կանոնակարգեր Օրենքի տրամաբանությանը համահունչ:

8. Ռեկտորից բացի, հաստատության մյուս ղեկավարների իրավունքները և գործառույթները նկարագրվում են ՀՀ օրենքներով,հաստատության կանոնադրությամբ, Աշխատանքային պայմանագրով, ներքին կանոնակարգերով և այլ իրավական ակտերով:
   1) Հաստատության ղեկավարները իրավունք ունեն հայտնել օրենսդրության կամ էթիկայի սկզբունքների ցանկացած ենթադրյալ խախտման մասին համապատասխան մարմնին՝ առանց իրենց անձի համար անբարենպաստ հետևանքներ առաջանալու մտավախության:

9. Բարձրագույն ուսումնական հաստատության ղեկավարներն ունեն հետևյալ պարտականությունները՝

   1) իրենց գործառույթները և պարտականություններն իրականացնելիս վեր դասել հաստատության շահերն իրենց սեփական շահերից, և չձգտել շահույթ ստանալ, օգտագործելով իրենց զբաղեցրած պաշտոնը, հակառակ գործող օրենսդրությանը և իրենց աշխատանքային պայմանագրին,
   2) չընդունել որոշակի ձևով գործելու կամ չգործելու որևէ հրահանգ ցանկացած անձից, բացառությամբ վերադասի, կամ որևէ քաղաքական կուսակցությունից, արհմիությունից կամ կրոնական խմբից,
   3) Կադրերի բաժինների (այդ թվում՝ աշխատակազմի նշանակման և առաջխաղացման), ֆինանսական, պայմանագրային և որևէ այլ համապատասխան հարցերում իրենց կամ իրենց ընտանիքի անմիջական անդամի որևէ անձնական շահի առկայության դեպքում գրավոր հայտնել ռեկտորին (իսկ ռեկտորի դեպքում՝ կառավարման մարմնի ղեկավարին),

4) չ պահանջել կամ չընդունել որևէ կաշառք կամ այլ ֆինանսական միջոց, կամ չփորձել ստանալ կամ ընդունել որևէ այլ անձնական օգուտ, որը կարող է ազդեցություն գործել իրենց վրա իրենց աշխատանքի ընթացքում,
5) անմիջապես հայտնել կաշառելու կամ անձնական օգուտ առաջարկելու ցանկացած փորձի մասին ռեկտորին (իսկ ռեկտորի դեպքում՝ կառավարման մարմնի ղեկավարին),
6) չվատնել հաստատության ռեսուրսները, կամ սխալ չօգտագործել հաստատության տնօրինության տակ գտնվող անձնական կամ առևտրային տեղեկությունները՝ անձնական կամ որևէ այլ անձի համար շահ ստանալու նպատակով,
7) ապահովել, որ իրենց իրավասության ներքո գտնվող բոլոր անձինք իրազեկ լինեն համապատասխան օրենսդրությանն ու կանոններին և դրանք չպահպանելու հետևանքներին, և նպաստել էթիկական վարվեցողության պահպանմանը:

Կարգապահական տույժեր

10. Կարգապահական տույժերը պետք է հիմնվեն արդարության, գաղտնիության և պատշաճ ծանուցման սկզբունքների վրա և պետք է համապատասխանեն գործող օրենսդրության պահանջներին:

11. Կարգապահական տույժի կիրառման դեպքում պետք է հաշվի առնվեն խախտման ծանրությունը և դրա հետևանքները, աշխատողի մեղքը, այդ խախտման կատարման հանգամանքները և աշխատողի՝ նախկինում կատարած աշխատանքը:
    1) Կառավարման մարմնի և ղեկավարների մասով էթիկական վարվեցողության խախտման մասին բողոքները պետք է ներկայացնել գրավոր՝ հաստատության էթիկայի կանոնագրքի պահանջներին համապատասխան, որը պետք է մշակվի առանձին դերակատարների համար: Առանցքային սկզբունքն այն է, որ էթիկական վարվեցողության գծով հատուկ ղեկավար կոմիտեի բացակայության դեպքում կամ օրենսդրության մեջ համապատասխան կարգավորման բացակայության պարագայում ենթադրյալ խախտումների մասին նկատառումները և որոշումները պետք է ներկայացնել վերադասին,
    2) Իրավասու բաժինը պետք է որոշի, թե (i) արդյո՞ք բողոքում ներկայացված են խախտման փաստի վերաբերյալ ողջամիտ հիմքեր, (ii) արդյո՞ք ենթադրյալ խախտում համարվող փաստերը հանդիսանում են ակադեմիական աշխատակազմի էթիկական վարվեցողության խախտումներ, (iii) արդյո՞ք տվյալ բաժինը իրավասու է քննել այդ դեպքը:
    3) Շահագրգիռ կողմերին պետք է գրավոր տեղեկացնել բարձրագույն ուսումնական հաստատության համապատասխան քաղաքականության համաձայն՝ նշելով պատշաճ ծանուցման մասին ընթացակարգերը:
    4) Կիրառվող կարգապահական տույժերը պետք է համապատասխանեն գործող օրենսդրությանը, բուհի ներքին քաղաքականություններին և

կանոնակարգերին՝ (i) նախազգուշացում, (ii) նկատողություն, (iii) լիազորությունների կասեցում և (iv) աշխատանքից ազատում:

Հարակից կանոններ

12. Կառավարման մարմինների անդամների և ղեկավարների համար, էթիկայի կանոնագրքից բացի, պետք է ընդունվեն այլ կանոններ, կամ պետք է գործող կանոնները փոփոխության ենթարկվեն՝ վերոնշյալ էթիկական վարվեցողության սկզբունքներին համապատասխան:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՐ ԷԹԻԿԱՅԻ ՏԻՊԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Ներածություն

1. Սույն փաստաթուղթը նպատակ ունի ապահովելու բարձրագույն ուսումնական հաստատություններում ակադեմիական աշխատակազմի համար էթիկայի տիպային կանոնագրքի ընդունման հիմքերը: Սույն տիպային կանոնագրքի առաջարկները պետք է արտացոլվեն համապատասխան հաստատության ներքին կանոնադրություններում, կանոններում և ընթացակարգերում:

Սկզբունքները

2. ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան նշանակված կամ ընտրված ակադեմիական աշխատակազմի անդամների վարքագիծը պետք է համապատասխանի էթիկական վարվեցողության ընդհանուր սկզբունքներին, որոնք նշված են Էթիկայի կանոնագրքի ուղեկցող փաստաթղթում:
3. Այդ սկզբունքները պետք է կիրառելի լինեն ակադեմիական աշխատակազմի նկատմամբ.
    1) հաստատության կառավարման մարմնի,
    2) ղեկավար և այլ բաժինների,
    3) այլ ակադեմիական և օժանդակ աշխատակազմի,
    4) ուսանողների, սովորողների
    5) պայմանագրային կամ որևէ այլ հարաբերության մեջ գտնվող է կամ հաստատության գործունեության հետ կապված հետաքրքրություն ունեցող ցանկացած անձանց կամ խմբերի հետ հարաբերություններում:

Տիպային կանոնագիրք և հիմնական կանոններ

4. Էթիկական վարվեցողության ընդհանուր սկզբունքների համաձայն յուրաքանչյուր բարձրագույն ուսումնական հաստատություն պետք է ընդունի և հրապարակի կանոններ, որոնք կարգավորում են հետեւյալ հարցերը.
    1) վարքագիծը, այդ թվում՝ կարգապահությունը և կարգապահական տույժերը,
    2) աշխատանքի նշանակումը, առաջխաղացումը և աշխատանքից ազատումը,
    3) գիտական հետազոտությունը,
    4) քննություններն ու գնահատումը:

Այս կանոնները առնվազն պետք է հստակ ներառեն էթիկական վարվեցության սկզբունքները, գործող օրենսդրության համաձայն նախատեսեն սանկցիաներ՝ դրանք չպահպանելու համար:

Բարձրագույն ուսումնական հաստատության ակադեմիական աշխատակազմի իրավունքները և պարտականությունները

5. Բարձրագույն ուսումնական հաստատության ակադեմիական աշխատակազմի <u>իրավունքները</u>.

1) արտահայտվելու և տեղեկություն ստանալու ազատության իրավունք,
2) գնահատվել որպես գիտնական և դասավանդող՝ ելնելով մտավոր և մասնագիտական չափանիշներից, այլ ոչ թե քաղաքական ու կրոնական հայացքներից, կամ անձնական նախապատվության որևէ այլ հանգամանքից,
3) որոշել իրենց կողմից դասավանդվող դասընթացների բովանդակությունը՝ ուսումնական պլանի պահանջներին համապատասխան,
4) գնահատել ուսանողների կատարողականը և ձեռքբերումները՝ համալսարանի գնահատման քաղաքականությունների և նախապես սահմանված գնահատման չափանիշների հիման վրա,
5) չընդունել որոշակի ձևով գործելու կամ չգործելու որևէ հրահանգ ցանկացած անձից, բացառությամբ՝ վերադասի, կամ որևէ քաղաքական կուսակցությունից, արհմիությունից կամ կրոնական խմբից, բացառությամբ՝ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի,
6) հայտնել օրենսդրության կամ էթիկայի սկզբունքների ցանկացած ենթադրյալ խախտման մասին համապատասխան մարմնին՝ առանց իր համար անբարենպաստ հետևանքներ առաջանալու մտավախության:

6. Բարձրագույն ուսումնական հաստատության ակադեմիական աշխատակազմը **պարտավոր է**.

1) վեր դասել հաստատության շահերը սեփական շահերից, և չձգտել շահույթ ստանալ՝ օգտագործելով իրենց պաշտոնը գործող օրենսդրությանը հակառակ,
2) հաստատության ներսում կամ դրանից դուրս ցանկացած անձից կամ խմբից չպահանջել կամ չընդունել կաշառք կամ որևէ այլ անօրինական ֆինանսական միջոց, կամ չփորձել ստանալ կամ ընդունել որևէ անձնական օգուտ, որը կարող է ազդել իրենց վրա իրենց աշխատանքի ընթացքում, և հաստատության կանոններով նախատեսված համապատասխան մարմնին անմիջապես հայտնել կաշառելու կամ անձնական շահ առաջարկելու ցանկացած փորձի մասին,
3) կադրերին վերաբերող(այդ թվում՝ աշխատակազմի նշանակման և առաջ-խաղացման), ֆինանսական, պայմանագրային և որևէ այլ համապատասխան հարցերում իրենց կամ իրենց ընտանիքի անմիջական անդամի որևէ անձնական շահի առկայության դեպքում գրավոր հայտնել ռեկտորին,
4) չվատնել հաստատության ռեսուրսները, կամ սխալ չօգտագործել հաստատության տնօրինության տակ գտնվող անձնական կամ առևտրային տեղեկությունները, այդ թվում՝ մտավոր սեփականության մասին

տեղեկությունները՝ անձնական կամ որևէ այլ անձի կամ խմբի համար շահ ստանալու նպատակով,

5) դրսևորել էթիկական վարվեցողության ընդհանուր սկզբունքներին համապատասխան վարքագիծ՝ ակադեմիական աշխատակազմի կամ ընդունելության, գնահատման, քննության և ուսանողներին վերաբերող այլ գործողությունների հետ առնչվող մարմինների նշանակման, առաջխաղացման կամ այլ լիազորություններին վերաբերող հարցերում մասնակցություն ցուցաբերելու ժամանակ,
6) հարգել համալսարանի ուսանողներին և խուսափել ցանկացած շահագործումից կամ հետապնդումից, կամ ուսանողների նկատմամբ խտրական վերաբերմունքից,
7) հարգել ուսանողների միջև տարբերությունները՝ ներառյալ (բայց չսահմանափակվելով) քաղաքական և կրոնական համոզմունքների հետ կապված կողմնորոշումները,
8) պաշտպանել ուսանողների ակադեմիական ազատությունը.
9) Հետազոտական գործունեության ընթացքում չզբաղվել գրագողությամբ, կատարել հղումներ և ուրիշի աշխատանքն իրեն չվերագրել, չկեղծել արդյունքները և պահպանել էթիկայի սկզբունքները՝ անձնական տվյալների պաշտպանության առումով կամ որոշակի առարկայական ոլորտներում այլ հատուկ սկզբունքներ՝ հաստատության Կանոնների համաձայն (օրինակ՝ բժշկագիտության կամ անասնաբուժության, սոցիոլոգիական հետազոտության բնագավառում),
10) խտրականություն չդրսևորել կամ չհետապնդել գործընկերներին, հարգել բազմակարծությունը և արտահայտվելու ազատությունը,
11) ապահովել, որ իրենց իրավասության ներքո գտնվող բոլոր անձինք իրազեկ լինեն համապատասխան օրենսդրությանը և կանոններին, դրանք չպահպանելու հետևանքներին և նպաստել էթիկական վարվեցողության պահպանմանը:

Կարգապահական տույժեր

7. Կարգապահական տույժերը պետք է հիմնվեն **արդարության, գաղտնիության և պատշաճ ծանուցման** սկզբունքների վրա:
   1) Ակադեմիական աշխատակազմի կողմից էթիկայի կանոնագրքի խախտման վերաբերյալ բողոքները պետք է ներկայացնել գրավոր՝ բարձրագույն ուսումնական հաստատության համապատասխան վարչություն/բաժին, որն իրավասու է քննել էթիկական վարվեցողության ենթադրվող խախտումները և որոշում կայացնել դրանց վերաբերյալ,
   2) Իրավասու բաժինը պետք է որոշի, թե
      ա. արդյոք բողոքում ներկայացվա՞ծ են խախտման փաստի վերաբերյալ ողջամիտ հիմքեր,

բ. արդյո՞ք ենթադրյալ խախտում համարվող փաստերը հանդիսանում են ակադեմիական աշխատակազմի էթիկական վարվեցողության խախտում,

գ. արդյոք տվյալ բաժինն իրավասու՞ է քննելու այդ դեպքը:

3) Շահագրգիռ կողմերին պետք է գրավոր տեղեկացնել բարձրագույն ուսումնական հաստատության համապատասխան քաղաքականության համաձայն՝ նշելով պատշաճ ծանուցման վերաբերյալ ընթացակարգերը,

4) Կիրառվող հնարավոր կարգապահական տույժերն են.

ա. նախազգուշացում,

բ. նկատողություն,

գ. խիստ նկատողություն,

դ. լիազորությունների կասեցում՝ պահպանելով վարձատրությունը կամ առանց վարձատրության,

ե. աշխատանքից ազատում:

Բողոքարկումը

8. Ակադեմիական աշխատակազմն իրավունք ունի բողոքարկել կարգապահական տույժ կիրառելու հարցով պատասխանատու մարմնի որոշումը:

1) Բողոքը պետք է ներկայացնել հաստատության անունից որոշում կայացրած մարմնի վերադասին, որոշումը ստանալուց հետո որոշակի ժամկետում:

2) Բողոքը պետք է ներկայացնել գրավոր, նշելով բողոքարկման հիմքերը:

3) Բարձրագույն ուսումնական հաստատության շրջանակներում կրկնակի բողոքարկման հնարավորություն չի կարող լինել:

Հարակից կանոններ

9. Ի լրումն արդեն նշված հիմնական Կանոնների, պետք է ընդունվեն այլ Կանոններ, կամ գործող կանոնները պետք է փոփոխության ենթարկվեն էթիկայի կանոնագրքին համապատասխան և գործող օրենսդրության ու հաստատության կանոնադրության համաձայն:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԹԻԿԱՅԻ ՏԻՊԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Ներածություն

1. Սույն փաստաթուղթը նպատակ ունի ապահովելու բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների և սովորողների /այսուհետ՝ ուսանող/ համար էթիկայի կանոնագրքի ընդունման հիմքերը: Սույն տիպային կանոնագրքի առաջարկները պետք է արտացոլվեն համապատասխան հաստատության ներքին կանոնադրություններում, կանոններում և ընթացակարգերում:

Սկզբունքները

2. ՀՀ օրենսդրությանը համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունված ուսանողների վարքագիծը պետք է համապատասխանի էթիկական վարվեցողության այն ընդհանուր սկզբունքներին, որոնք նշված են էթիկայի կանոնագրքի ուղեկցող փաստաթղթում:
3. Այդ սկզբունքները պետք է կիրառելի լինեն՝
   1) հաստատության կառավարման մարմնի, ղեկավարության, ակադեմիական և օժանդակ աշխատակազմի և հաստատության այլ մարմինների,
   2) այլ ուսանողների հետ հարաբերություններում:
   3) Բացի այդ, ուսումն ստանալու ցանկություն ունեցող անձինք իրավունք ունեն ակնկալել, որ հաստատության ղեկավարության և աշխատակազմի գործողություններն ընդունելության գործընթացներում կլինեն արդար՝ գործող օրենսդրության, հաստատության կանոնների և այլ կիրառելի կանոնագրքերում սահմանված էթիկայի սկզբունքների համաձայն: Ի լրումն, ուսանողներից ակնկալվող էթիկական վարվեցողության պահանջը տարածվում է նաև նրանց անունից հանդես եկող բոլոր անձանց, այդ թվում՝ ծնողների և նրանց հավասարեցված կարգավիճակ ունեցող անձանց վրա:

Տիպային կանոնագիրք և հիմնական կանոններ

4. Էթիկական վարվեցողության ընդհանուր սկզբունքների համաձայն յուրաքանչյուր բարձրագույն ուսումնական հաստատություն պետք է ընդունի և հրապարակի կանոններ, որոնք կարգավորում են հետևյալ հարցերը.
   1) վարքագիծը, այդ թվում՝ կարգապահությունը, ակադեմիական բարեվարքությունը և կարգապահական տույժերը,
   2) ընդունելությունը, ուսումնական ծրագրերը, քննությունները և գնահատումը
   3) բողոքարկման ընթացակարգերը:

Այս կանոնները առնվազն պետք է հստակ ներառեն էթիկական վարվեցողության սկզբունքները, գործող օրենսդրության համաձայն նախատեսեն սանկցիաներ՝ դրանք չպահպանելու համար/դեպքում:

Ուսանողների ընդհանուր իրավունքները և պարտականությունները

5. Բարձրագույն ուսումնական հաստատության (ԲՈՒՀ) ուսանողներն ունեն հետևյալ **իրավունքները**.

1) զերծ լինել խտրական վերաբերմունքից՝ կախված ռասայից, կրոնից, էթնիկ ծագումից, քաղաքական հայացքներից, տարիքից, սեռից, հաշմանդամության կամ անձնական բնույթի այլ հանգամանքից,
2) ունենալ արտահայտվելու ազատության, հավաքների ու միավորվելու ազատության իրավունք՝ պայմանով, որ այդ ազատությունները չեն խոչընդոտում դասերի արդյունավետ իրականացմանը, համապատասխանում են բարձրագույն ուսումնական հաստատության քաղաքականություններին, էթիկական վարվեցողության այլ սկզբունքներին, ինչպիսիք են՝ հարգանքն այլոց իրավունքների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքների նկատմամբ,
3) գնահատվել արդար և պատշաճ կերպով տեղեկացված լինել գնահատման չափանիշների մասին՝ բուհի համապատասխան քաղաքականությունների համաձայն,
4) բողոքարկել բուհի բողոքարկման քաղաքականությունների համաձայն,
5) զերծ լինել բուհի համայնքի ցանկացած անդամի հետապնդումից,
6) լսված լինել, եթե որոշում է ընդունվում իր դեմ,
7) ժամանակին տեղեկացված լինել կարգապահական վարույթների կամ գործողությունների մասին,
8) հայտնել օրենսդրության կամ էթիկայի սկզբունքների ցանկացած ենթադրյալ խախտման մասին համապատասխան մարմնին՝ առանց իր համար անբարենպաստ հետևանքներ առաջանալու մտավախության:

6. Բարձրագույն ուսումնական հաստատության (ԲՈՒՀ) ուսանողներն ունեն հետևյալ **պարտականությունները.**

1) ծանոթանալ սույն Կանոնագրքին և բուհի բոլոր այլ քաղաքականությունների դրույթներին,
2) հաստատության ներսում կամ դրանից դուրս ցանկացած անձի կամ խմբի առնչությամբ չառաջարկել կամ չընդունել կաշառք կամ որևէ այլ անօրինական ֆինանսական միջոց, կամ չփորձել ստանալ կամ չստանալ որևէ այլ անձնական օգուտ, որը կարող է ազդեցություն գործել իրենց ուսման, կամ այլ անձանց աշխատանքի վրա,
3) հաստատության կանոններով նախատեսված՝ համապատասխան մարմնին անմիջապես հայտնել կաշառելու կամ անձնական օգուտ ստանալու ցանկացած փորձի մասին,
4) չվատնել հաստատության ռեսուրսները, կամ ոչ իրավաչափ ձևով չօգտագործել հաստատության տնօրինության ներքո գտնվող անձնական կամ առևտրային,

այդ թվում՝ մտավոր սեփականության մասին տեղեկությունները՝ անձնական շահ ստանալու նպատակով կամ ի շահ որևէ այլ անձի կամ խմբի,

5) ցուցաբերել հարգալից վերաբերմունք կառավարման խորհրդի, ղեկավարների, ակադեմիական և օժանդակ աշխատակազմի և մյուս ուսանողի նկատմամբ, պահպանելով էթիկական վարվեցողության ընդհանուր սկզբունքները, և դրական ու կառուցողական ներդրում ունենալ հաստատության ակադեմիական գործունեության մեջ,
6) ուսման կամ հետազոտական գործունեության ընթացքում չզբաղվել գրագողությամբ, ինչպես սահմանված է հաստատության Կանոններում, կատարել հղումներ և և այլոց աշխատանքն իրենց չվերագրել, չներկայացնել այլ անձանց աշխատանքը որպես սեփական աշխատանք կամ չկեղծել արդյունքները, և պահպանել անձնական տվյալների պաշտպանության հետ կապված էթիկայի սկզբունքները կամ որոշակի առարկայական ոլորտներում այլ հատուկ սկզբունքներ՝ հաստատության Կանոնների համաձայն (օրինակ՝ բժշկագիտության կամ անասնաբուժության, սոցիոլոգիական հետազոտության բնագավառում),
7) քննություններին և գնահատման այլ ձևերին մասնակցելիս չխաբել, անհատապես կամ խմբակային չարտագրեն այլոց աշխատանքը, կամ չփորձել ձեռք բերել որևէ արտոնություն՝ ցանկացած ձևով դա խթանելու միջոցով, կամ դիտավորությամբ թույլ տալով որևէ այլ անձի իրենց անունից առաջարկել խրախուսական որևէ միջոց:

Կարգապահական տույժեր

7. Կարգապահական տույժերը պետք է հիմնվեն **արդարության, գաղտնիության և պատշաճ ծանուցման** սկզբունքների վրա: Կանոնագրքի և հաստատության այլ կանոնների խախտումները կարող են հանգեցնել հետևյալ կարգապահական տույժերի՝
    1) ուսանողին բանավոր նախազգուշացում՝ կախված խախտման բնույթից,
    2) խախտում կատարելու մասին գրավոր նախազգուշացում,
    3) ակադեմիական գնահատականի նվազեցում ՝ կախված խախտման բնույթից,
    4) ուսանողին հաստատությունից հեռացում,
    5) ուսման վարձի մասնակի զեղչից զրկում,
    6) կրթաթոշակից զրկում,
    7) այլ իրավունքների և արտոնությունների սահմանափակում:

Կարգապահական տույժի բնույթից կախված՝ այն կիրառելու իրավունքը կարող է պատկանել տարբեր մարմինների՝ դասընթացի հետ կապված հարցերով (1-7 կետերում թվարկված տույժեր). կարգապահական տույժերը կարող են կիրառվել ակադեմիական աշխատակազմի կողմից, իսկ հեռացումը պետք է կիրառվի հաստատության ղեկավար կազմի՝ պրոռեկտորի և ռեկտորի կողմից, եթե այլ բան նախատեսված չէ հաստատության իրավական կանոնակարգերով և Հայաստանի Հանրապետության օրենքներով:

3- 7 կետերում նշված կարգապահական տույժերը կիրառելիս ակադեմիական աշխատակիցը պետք է խորհրդակցի ամբիոնի վարիչի և դեկանի հետ, եթե այլ բան նախատեսված չէ հաստատության Կանոններով:

Բողոքարկումը

8. Ուսանողներն իրավունք ունեն բողոքարկել կարգապահական տույժ կիրառելու հարցով պատասխանատու մարմնի որոշումը:

1) Եթե կարգապահական տույժերը ներկայացվել են գրավոր, ապա ուսանողը պետք է բողոքարկի գրավոր կերպով:
2) Բողոք ներկայացնելիս ուսանողները պետք է այն ներկայացնեն վերադաս մարմնին, եթե այլ բան նախատեսված չէ հաստատության բողոքարկման քաղաքականությամբ կամ ընթացակարգերով:

Հարակից կանոններ

9. Ի լրումն արդեն նշված հիմնական Կանոնների, պետք է ընդունվեն նաև այլ Կանոններ, կամ գործող կանոնները պետք է փոփոխության ենթարկվեն վերոնշյալ էթիկական վարվեցողության սկզբունքներին համապատասխան և գործող օրենսդրության ու հաստատության կանոնադրության համաձայն:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՄՇԱԿԵԼՈՒ ՈՒՂԵՑՈՒՅՑ

1. Նպատակը

Ուղեցույցի հիմնական նպատակն է՝ ներկայացնել այն քաղաքականությունների, ընթացակարգերի, կանոնների և կանոնակարգերի ցանկը, որոնք անհրաժեշտ են էթիկայի կանոնագրքի (կանոնագրքերի) արդյունավետ իրականացումն ապահովելու համար: Ուղեցույցը ներառում է նաև այն հարցերը, որոնք պետք է ընդգրկվեն յուրաքանչյուր փաստաթղթում:

Բոլոր քաղաքականությունները, ընթացակարգերը, կանոնները և կանոնակարգերը պետք է պաշտոնապես հաստատվեն բուհի համապատասխան իրավասու մարմինների կողմից:

2. Քաղաքականություններ, ընթացակարգեր, կանոններ և կանոնակարգեր

Քաղաքականությունների, ընթացակարգերի, կանոնների և կանոնակարգերի առաջարկվող ցանկը պետք է փոխկապված լինի ընդունված էթիկայի կանոնագրքի (կանոնագրքերի) հետ: Փաստաթղթերի ներկայացված ցանկը, ինչպես նաև յուրաքանչյուր փաստաթղթում ներառված հարցերի ցանկը սպառիչ չեն, և յուրաքանչյուր բուհ կարող է ընդլայնել դրանք՝ ելնելով սեփական կարիքներից:

2.1. Խտրականության և հետապնդման արգելքի քաղաքականություն, որը պետք է կարգավորի հետևյալ հարցերը.

- Խտրականության, հավասար հնարավորության և հետապնդման սահմանումը
- Բուհի հանձնառությունը՝ ձեռնարկելու միջոցներ խտրականությունը բացառելու համար և ապահովելու բոլոր անձանց համար հավասար հնարավորություններ
- Բուհի գործունեության ոլորտների և տեսակների մանրամասն նկարագրությունը, որոնց առնչությամբ պետք է կիրառվի խտրականության և հետապնդման արգելքի քաղաքականությունը
- Խտրականության և հետապնդման մասին բողոքներին արձագանքելու և քաղաքականության իրականացման առնչությամբ բուհի ընթացակարգերը մշտադիտարկելու համար պատասխանատու ներբուհական մարմինը
- Խտրականության և հետապնդման մասին հայտարարություն ներկայացնելու ընթացակարգը և բողոքների քննարկման կանոնները

2.2. Արտահայտվելու ազատության և խոսքի ազատության քաղաքականություն, որը պետք է կարգավորի հետևյալ հարցերը.

- Խոսքի և արտահայտվելու ազատության սահմանումները
- Բուհի հանձնառությունը՝ պաշտպանելու արտահայտվելու և խոսքի ազատությունը բուհական համայնքի բոլոր անդամների համար
- Բուհի տարածքում արտահայտվելու և խոսքի ազատության համար կիրառելի սահմանափակումների պատշաճ ժամանակը, վայրը և եղանակը
- Քաղաքականության իրականացման և բողոքների քննարկման համար պատասխանատու ներբուհական մարմինը

- Բողոքներ ներկայացնելու ընթացակարգը և բողոքների քննարկման կանոնները

2.3. Հավաքների և միավորվելու ազատության քաղաքականություն, որը պետք է կարգավորի հետևյալ հարցերը.

- Հավաքների ու միավորվելու ազատության սահմանումները
- Բուհի հանձնառությունը՝ պաշտպանելու հավաքների ու միավորվելու ազատությունը՝ բուհական համայնքի բոլոր անդամների համար
- Բուհի տարածքում հավաքների և միավորվելու ազատության համար կիրառելի սահմանափակումների պատշաճ ժամանակը, վայրը և եղանակը
- Քաղաքականության իրականացման և բողոքների քննարկման համար պատասխանատու ներբուհական մարմինը
- Բողոքներ ներկայացնելու ընթացակարգը և բողոքների քննարկման կանոնները

2.4. Ակադեմիական ազատության մասին կանոններ, որոնք պետք է կարգավորեն հետևյալ հարցերը.

- Ակադեմիական ազատության սահմանումը
- Ակադեմիական ազատության սկզբունքները
- Բուհի պարտականությունները

2.5. Գնահատման քաղաքականություն, որը պետք է կարգավորի հետևյալ հարցերը.

- Բուհում կիրառելի գնահատման համակարգը
- Կրեդիտների հաշվարկման կանոնները
- Գնահատականը բողոքարկելու դեպքերը
- Գնահատականը բողոքարկելու ընթացակարգը

2.6. Ուսանողների փորձաշրջանը և նրանց հեռացմանը վերաբերող կանոններ, որոնք պետք է կարգավորեն հետևյալ հարցերը.

- Փորձաշրջանի և հեռացման սահմանումները
- Փորձաշրջանի և հեռացման համար բոլոր հիմքերը կարգավորող կանոնները
- Ընթացակարգը
- Բողոքարկման կանոնները
- Իրավական հետևանքները

2.7. Գրագողության և աշխատանքի սեփականության մասին կանոններ, որոնք կարգավորում են հետևյալ հարցերը.

- Գրագողության և աշխատանքի սեփականության սահմանումը
- Գրագողության տեսակները (պատահական, բացահայտ, ինքնագրագողություն)
- Ակադեմիական աշխատանքի սեփականությանը վերաբերող կանոնները
- Հղման կանոնները
- Հղման կանոնները և ակադեմիական աշխատանքի սեփականությանը վերաբերող կանոնները խախտելու համար նախատեսված պատիժները
- Պատիժը նշանակելու համար պատասխանատու մարմինը
- Բողոքարկման ընթացակարգը

2.8. Հետազոտական բարեվարքության և էթիկայի մասին կանոնակարգ, որը պետք է կարգավորի հետևյալ հարցերը.

- Հետազոտական չափանիշների մանրամասն նկարագրությունը
- Հետազոտության ժամանակ անբարեխիղճ վարքագծի սահմանումը
- Հայտնելու պարտավորությունը
- Քննարկման ընթացակարգը և իրավական հետևանքները

2.9. Կոռուպցիայի և կաշառակերության դեմ պայքարի քաղաքականություն, որը պետք է կարգավորի հետևյալ հարցերը.

- Բուհական համայնքի բոլոր անդամների՝ այս քաղաքականությամբ սահմանված պարտականությունները
- Այս քաղաքականությամբ արգելված գործողությունները
- Այս քաղաքականությամբ թույլատրվող գործողությունները
- Նվիրատվություններ
- Տվյալների արձանագրում
- Դեպքի մասին հայտնելը և պաշտպանություն
- Մշտադիտարկում և վերահսկողություն

2.10. Անօրինական գործողությունների մասին հայտնելու վերաբերյալ քաղաքականություն, որը պետք է կարգավորի հետևյալ հարցերը.

- Քաղաքականության կիրառման ոլորտը
- Անօրինական գործունեության տեսակները
- Պաշտպանությունը և երաշխիքները
- Անօրինական գործողությունների մասին հայտնելու ընթացակարգը
- Տեղեկությունների քննման ընթացակարգը
- Քննության արդյունքի անկախ վերանայումը

2.11. Ուսումնական ծրագրի մշակման և վերանայման քաղաքականություն, որը պետք է կարգավորի հետևյալ հարցերը.

- Սահմանումները
- Մշակման և քննարկման գործընթացը
- Հաստատման գործընթացը
- Վերանայումները
- Ուսումնական ծրագրի ձևանմուշը

2.12. Շահերի բախման մասին կանոններ, որոնք պետք է կարգավորեն հետևյալ հարցերը.

- Կիրառման ոլորտը
- Շահերի բախման սահմանումը
- Ֆինանսական և ոչ ֆինանսական շահերի բախում
- Շահերի հայտարարագրման մասին կանոնները
- Բացահայտման ընթացակարգը
- Սույն քաղաքականությունն իրականացնելու համար պատասխանատու ներբուհական մարմինը

2.13. Ներքին աուդիտի մասին քաղաքականություն, որը պետք է կարգավորի հետևյալ հարցերը.

- Ներքին աուդիտի կիրառման ոլորտը
- Ներքին աուդիտ իրականացնելու համար իրավասու մարմինը

- Իրավասու մարմնի պարտականությունը
- Աուդիտի սկզբունքները
- Իրավասու մարմնի լիազորությունը

2.14. Ռիսկերի կառավարման քաղաքականություն, որը պետք է կարգավորի հետևյալ հարցերը.

- Ռիսկերի կառավարման հիմնական սկզբունքները
- Իրավասու մարմնի (մարմինների) պարտականությունները
- Ներքին վերահսկողության համակարգը

2.15. Կառավարման և ղեկավարման վերաբերյալ կանոններ, որոնք պետք է կարգավորեն հետևյալ հարցերը.

- Կիրառման ոլորտը և սահմանումները
- Արժեքները և սկզբունքները
- Մանրամասն պարտավորությունները և պարտականությունները (վստահության վրա հիմնված և այլ պարտավորություններ, պետական և բարեգործական ֆոնդերի օգտագործում, կանոնադրական հաշվետվողականություն և այլն)
- Բողոքները և ընթացակարգը
- Բողոքարկումը

2.16. Աշխատանքային հարաբերությունների մասին կանոններ, որոնք պետք է կարգավորեն հետևյալ հարցերը.

- Կիրառման ոլորտը
- Աշխատանքային հարաբերությունների տեսակների սահմանումը
- Նշանակման, առաջխաղացման, կարգապահության և աշխատանքային հարաբերությունների դադարեցման հետ կապված ընթացակարգերը
- Աշխատանքի ընդունման մասին կանոնների իրականացման համար պատասխանատու իրավասու մարմինը (մարմինները)
- Բողոքարկման ընթացակարգը

ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԳՐՔՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Ազնվություն – Էթիկայի կանոնագրքի ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված տիպօրինակում ներկայացված էթիկական 14 սկզբունքներից մեկն է: Այն ենթադրում է լինել ճշմարտախոս, և հավաստի ներկայացնել իրականացրած գործողությունները/արարքները: Ազնվությանը հակասում է նաև որևէ արարքի մասին լռելը, հաղորդելուց խուսափելը:

Ակադեմիական աշխատակազմ – ներառում է բուհում դասավանդող պրոֆեսորադասախոսական կազմը, այդ թվում՝ ղեկավար ակադեմիական պաշտոններ զբաղեցնող և դասավանդող աշխատակազմը:

Ակադեմիական բարեվարքություն – ենթադրում է հավատարմություն բարոյական և էթիկական սկզբունքներին, որպես ակադեմիական մշակույթի ձևավորման և կայացման հենասյուն: Երբ ուսանողները և պրոֆեսորադասախոսական կազմը ձեռք են բերում գիտելիք՝ ազնիվ և արդարացի միջոցներով, հարգում և վստահում են միմյանց, կրում են պատասխանատվություն իրենց գործողությունների և այդ գործողությունների հետևանքների համար, ապա կարելի է պնդել, որ առկա է ակադեմիական բարեվարքության մշակույթ: ակադեմիական բարեվարքությունը վտանգում են (1) գրագողությունը, (2) անպատշաճ համագործակցությունը, (3) անազնվությունը քննությունների ժամանակ, այդ թվում՝ սեփական անվան տակ ուրիշի կողմից պատրաստված/գրված աշխատանքի ներկայացումը, (4) տվյալների կեղծումը, (5) այլ ուսանողների կամ գիտնականների աշխատանքին միջամտելը, (6) կաշառքը, անհարկի լավություն անելը, սպառնալիքները, (7) ակադեմիական այլ զանցանք:

Այլոց նկատմամբ հարգանք – հարգանք այլոց իրավունքների, նախապատվությունների, դյուրազգայնության նկատմամբ: Այլոց նկատմամբ հարգանքի սկզբունքը վտանգվում է, երբ մարդկանց արարքները կարող են սպառնալիք պարունակել կամ թշնամանք դրսևորել այլ անհատների նկատմամբ: Վիրավորական կամ սեռական բնույթի վարքագիծը, ինչը նվաստացնում, վախեցնում, սպառնում կամ վիրավորում է անձին՝ պայմանավորված դիմացինի անձնական հատկանիշներով կամ համոզմունքներով, խախտում է այլոց նկատմամբ հարգանքի սկզբունքը:

Անանուն գնահատում – Ուսանողների և սովորողների քննությունների, կուրսային, դիպլոմային և այլ աշխատանքների գնահատման ժամանակ գնահատողը չգիտի գնահատվողի ինքնությունը: Գնահատման ենթակա աշխատանքները նույնականացվում են ոչ թե ուսանողի անուն-ազգանունով, այլ տվյալ ուսանողին հատկացված նույնականացման համարով:

Արդարացիություն – բուհական բոլոր դերակատարների միջև հարաբերություններում միմյանց նկատմամբ անաչառության դրսևորում: Սա ենթադրում է անկողմնակալ վարքագիծ՝ դասավանդման, գնահատման, հետազոտության, առաջխաղացման և աստիճանների ու պաշտոնների նշանակման, ինչպես նաև այլ պարտականությունների իրականացման գործում, համակուրսեցիների և բուհի աշխատակիցների հետ հարաբերություններում:

Արտաքին գնահատող – արտաքին գնահատողների համակարգն առաջին անգամ ներդրվել է բրիտանական կրթական համակարգում, այնուհետև մի շարք առաջատար բարձրագույն ուսումնական հաստատություններ տեղայնացրել են բրիտանական փորձը: Արտաքին գնահատողներն այլ բուհերի մասնագիտական և ակադեմիական փորձ ունեցող դասախոսներ են, ովքեր հիմնականում ընտրվում կամ նշանակվում են իրենց բուհի կողմից՝ հավաստելու/գնահատելու այլ բուհի կողմից տրվող կրթության որակավորման համապատասխանությունը ակադեմիական չափանիշներին, ուսանողների գնահատումն ընդդեմ կրթական ծրագրի վերջնարդյունքների, տվյալ բուհի և իրենց բուհի կողմից տրվող որակավորումների համեմատելիությունը: Արտաքին գնահատողների գործառույթները կարող են տարբերվել ըստ բուհերի:

Բարեվարքություն – բարձրագույն ուսումնական հաստատությունների առօրյա աշխատանքում ընդունված արժեքների, սկզբունքների եւ նորմերի շարունակական կիրառում՝ առաջադիր նպատակներին և շահառուներին լավագույնս ծառայելու և նրանց շահերը պաշտպանելու համար: Բարեվարքությունը կոռուպցիայի առավել ընդգրկուն և կառուցողական հասկացություն է, որին հետրելով կարելի է 'առողջացնել' համակարգը:

Բուհի կառավարման մարմիններ – Բուհերը հիմնականում ունեն կառավարման 3 մարմին. Գործադիր կառավարման մարմին (հիմնականում՝ ռեկտոր), ակադեմիական մարմին (գիտական խորհուրդ, ակադեմիական խորհուրդ), կոլեգիալ կառավարման մարմին (հոգաբարձուների խորհուրդ, կառավարման խորհուրդ):

Գրագողություն – օգտագործել, մեջբերել կամ արտատպել ուրիշների աշխատանքը, միտքը, խոսքերը առանց պատշաճ ձևով հղումներ կատարելու: Սեփական բառերով ուրիշների միտքը, խոսքը, աշխատանքը ներկայացնելը նույնպես գրագողություն է, եթե ըստ ակադեմիական գրելաձևի կանոնների չի նշվել, թե ում միտքն է:

Էթիկական վարվեցողություն – բարձրագույն ուսումնական հաստատությունների ներբուհական դերակատարներն իրենց ամենօրյա գործունեությունը և միմյանց հետ հարաբերությունները, այդ թվում ուսանողների հետ, կառուցում են էթիկայի կանոնագրքում ամրագրված 14 սկզբունքների հիմքի վրա: Այդ

սկզբունքներն առանձնացված են ՀՀ բարձրագույն կրթության ներբուհական դերակատարների համար մշակված էթիկայի տիպօրինակ կանոնագրքում:

Էթիկայի կանոնագիրք - Բարձրագույն ուսումնական հաստատության ներքին շրջանառության փաստաթուղթ, որտեղ ընդհանուր գծերով ներկայացված են կրթական գործունեության մասնակիցների և շահառուների վարքագծի սկզբունքները, իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև կարգապահական տույժերի հիմնական շրջանակը: Յուրաքանչյուր բուհի էթիկայի կանոնագիրք պետք է փոխկապակցված լինի բուհի համապատասխան կանոնակարգերի և ընթացակարգերի հետ. էթիկայի կանոնագրքի կիրառելիությունն ապահովվում է այլ կանոնակարգերի և ընթացակարգերի միջոցով:

Թափանցիկություն – բուհերը, ինչպես նաև բուհերի բոլոր դերակատարները հստակորեն բացահայտում, հանրայնացնում են բուհի գործունեության հետ կապված տեղեկատվություն, կանոններ, ծրագրեր, գործընթացներ և գործողություններ:

Կանոնակարգման համակարգ/կանոնակարգման շրջանակ – բուհի ներքին քաղաքականության, կանոնագրքերի և կանոնակարգերի, ինչպես նաև ընթացակարգերի ամբողջություն: Կանոնակարգման համակարգի մաս կազմող փաստաթղթերի առանձին հոդվածներ կարող են հիմք հանդիսանալ՝ բացահայտելու էթիկայի կանոնագրքի սկզբունքների խախտումները:

Կարգապահական գործողություն - կարգապահական տույժի գործնական կիրառում

Կարգապահական միջոց/տույժ – էթիկայի կանոնագրքում նշված սկզբունքների խախտման, իրավունքների և պարտականությունների թերացման բացահայտման արդյունքում բուհի համապատասխան միավորի կողմից տվյալ դերակատարի համար սահմանվող հետևանքներ:

Կոլեգիալություն – բուհի դերակատարների միջև հարաբերություններում համագործակցության կարևորության, կոլեկտիվ պատասխանատվության գիտակցում:

Հաշվետվողականություն – բուհի բոլոր դերակատարները պատասխանատու են իրենց լիազորությունները պատշաճ իրականացնելու համար, և հաշվետու են ինչպես ներբուհական վերադասության տրամաբանությամբ, այնպես էլ շահառուների և շահակիցների առջև:

Ճշմարտացիություն – բուհի դերակատարները պետք է պահպանեն և խոչընդոտ չհանդիսանան ճշմարտության ազատորեն բացահայտման և տարածման գործում: Այս սկզբունքը տարածվում է ինչպես դասավանդման և ուսումնառության, այնպես էլ հետազոտությունների իրականացման վրա:

Սոցիալական արդարություն – կայունության, հավասարության և արդարության կրթական և սոցիալական արժեքների, ինչպես նաև բուհի դերակատարների իրավունքների և պարտականությունների ճանաչում: Նպատակն է՝ ապահովել կրթության հասանելիությունը շահառու խմբերի համար:

Վստահություն – բուհերի բոլոր դերակատարները վստահ են այլոց ազնվության, ճշմարտացիության և բարեվարքության դրսևորման հարցում:

Հիմնական աղբյուրներ

"Academic integrity at MIT: A handbook for Students." Massachusetts Institute of Technology, US (https://integrity.mit.edu)

"Academic Integrity Code." American University, Washington DC (http://www.american.edu/academics/integrity/code.cfm)

"Higher Education Governance in Europe: Policies, structures, funding and academic staff." Eurydice: The information network on education in Europe (http://eacea.ec.europa.eu/education/eurydice/documents/thematic_reports/091EN.pdf)

"Plagiarism and how to avoid it." University of Essex, UK (https://www.essex.ac.uk/plagiarism/docs/Plagiarism_and_how_to_avoid_it_2009.pdf)

"Rights, Rules, Responsibilities." Princeton University, US (http://www.princeton.edu/pub/rrr/part1/)

"UK Quality Code for Higher Education - Chapter B7: External examining." Quality Assurance Agency, UK (http://www.qaa.ac.uk/en/Publications/Pages/Quality-Code-Chapter-B7.aspx#.V9AWRmWOqMI)

"Կոռուպցիայի դեմ պայքարը եւ բարեվարքության արմատավորումը Հայաստանի կրթական ոլորտում:" Centre for Applied Policy, Bulgaria /Publication funded by OSF-Armenia/ (http://www.osf.am/wp-content/uploads/2016/01/Integrity-report_final_arm_12.11.2015.pdf)

Հայաստանի Հանրապետության էթիկայի տիպային կանոնագրքերը մշակվել են Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրի շրջանակներում: Էթիկայի տիպային կանոնագրքերը անդրադառնում են բարձրագույն ուսումնական հաստատություններում ընդգրկված դերակատարների երեք խմբերի էթիկական վարքագծին՝ ակադեմիական կազմ (այդ թվում՝ ղեկավար և կառավարման բարձր պաշտոններ զբաղեցնող անձինք), բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներ և մասնագիտական ծառայությունների ղեկավար աշխատակիցներ:

Կանոնագրքերում ներկայացված է բոլոր դերակատարների իրավունքների ու պարտականությունների շրջանակը, ինչպես նաև էթիկական վարքագծի սկզբունքների խախտման դեպքում՝ կարգապահական միջոցների կիրառման սահմանները: Կանոնագրքերին կից ներկայացվում է ներածական փաստաթուղթ, որում նշվում է էթիկայի կանոնագրքերի նպատակը և կիրառման ոլորտը: Ներածական փաստաթղթում ներառված են նաև էթիկական վարքագծի 14 սկզբունքներ՝ Եվրոպայի խորհրդի՝ Կրթության ոլորտում էթիկայի, թափանցիկության և բարեվարքության համաեվրոպական հարթակին հղումներով:

HYE

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 47 պետություններ, որոնցից 28-ը միաժամանակ նաև Եվրոպական միության անդամներ են: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը նպատակաուղղված միջազգային համաձայնագրի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկվում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

www.coe.int

Եվրոպական միությունը 28 Եվրոպական ժողովրդավարական երկների տնտեսական և քաղաքական յուրահատուկ գործընկերություն է՝ իր 500 միլիոն քաղաքացիների համար առավել արդար և ապահով աշխարհում խաղաղություն, բարգավաճում և ազատություն ապահովելու նպատակով: Այս ամենն իրագործելու համար ԵՄ երկրները հիմնել են մարմիններ՝ ԵՄ աշխատանքներն իրականացնելու և նրա օրենսդրությունն ընդունելու համար: Նրա հիմնական մարմիններն են Եվրոպական խորհրդարանը, (որը ներկայացնում է ազգային կառավարությունները) և Եվրոպական հանձնաժողովը (որը ներկայացնում է ԵՄ ընդհանուր շահերը):

http://europa.eu

Partnership for Good Governance

Գործընկերություն հանուն լավ կառավարման

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE